uBox-ի շնորհիվ Դուք կունենաք և՛ ձայնային, և՛ ինտերնետ ծառայություններ: Ուստի այն շատ հարմար լուծում է ինչպես փոքր և միջին գրասենյակների, այնպես էլ՝ տան համար: Այս մոդեմը թույլ է տալիս ինտերնետին միացնել միաժամանակ մինչև 32 սարքավորում Wi-Fi-ի միջոցով և 1 սարքավորում լարային միացմամբ: Իսկ ֆիքսված հեռախոսակապից օգտվելու համար Դուք կարող եք uBox-ին միացնել նաև 1 ստացիոնար հեռախոս, որի համար կակտիվացվի 060 65 XX XX կոդով հեռախոսահամար: uBox ծառայությունից դուք կարող եք օգտվել uGo 12500 ՍՊ-ի միջոցով:

## Բաժանորդագրություն 24 ամսով

| ամսավճար | ներառված գերարագ ինտերնետ | զանգելու հնարավորություն և ներառված րոպեներ | այլ ներառումներ | հատուկ գին uBox-ի համար |
|---|---|---|---|---|
| 12 500 Դ | 300 ԳԲ գերարագ ինտերնետ | 5000 րոպե Ucom ցանցում 300 րոպե տեղական ֆիքսված ցանցեր | Ինտերնետ Միասին | uBox 1 Դ |

Գերարագ ինտերնետն սպառելուց հետո ներբեռնման և վերբեռնման արագությունը կդառնա 64 կբ/վ, որը կբավարարի առցանց վճարում կատարելու և գերարագ ինտերնետի փաթեթներ ակտիվացնելու համար: Անհրաժեշտության դեպքում Դուք կարող եք ակտիվացնել Գերարագ ինտերնետի փաթեթ նաև Ձեր բացասական հաշվեկշռից և շարունակել օգտվել ավելի արագ ինտերնետից: SMS-ի արժեքը դեպի տեղական բոլոր ցանցեր 15 դրամ է, իսկ միջազգային ուղղություններով՝ 20 դրամ:
Ամեն ամիս անհրաժեշտ է կատարել վճարում մինչև ընթացիկ ամսվա 20-ը ներառյալ: Վճարման ենթակա գումարն ստուգելու համար ուղարկե՛ք SMS 133 համարին կամ հավաքեք *133*11# և մուտքագրեք ինտերնետի հեռախոսահամարը Ucom-ի շարժական հեռախոսակապի ցանկացած համարից:

## Բաժանորդագրություն 12 ամսով

| սավճար | ներառված գերարագ ինտերնետ | զանգելու հնարավորություն և ներառված րոպեներ | այլ ներառումներ | հատուկ գին uBox-ի համար |
|---|---|---|---|---|
| 13 500 Դ | 301 ԳԲ գերարագ ինտերնետ | 5000 րոպե Ucom ցանցում 300 րոպե տեղական ֆիքսված ցանցեր | Ինտերնետ Միասին | uBox 1 Դ |

## Առանց բաժանորդագրության

| ամսավճար | ներառված գերարագ ինտերնետ | զանգելու հնարավորություն և ներառված րոպեներ | այլ ներառումներ | հատուկ գին uBox-ի համար |
|---|---|---|---|---|
| 12 500 Դ | 200 ԳԲ գերարագ ինտերնետ | 5000 րոպե Ucom ցանցում 300 րոպե տեղական ֆիքսված ցանցեր | Ինտերնետ Միասին | uBox 50000 Դ |

## U!Go 12 500

Այս սակագնային պլանի համար գործում են հետևյալ սակագները:

| | Գինը 1 րոպեի համար ներառած ԱԱՀ |
|---|---|
| զանգեր ֆիքսված ցանց | 15 Դ |

| | |
|---|---|
| զանգեր Ucom շարժական ցանց | 15 Դ |
| զանգեր շարժական այլ ցանցեր, Արցախ | 15 Դ |
| զանգեր միջազգային ուղղություններով | համաձայն ընթացիկ սակագների |
| SMS տեղական բոլոր ցանցեր և Արցախ | 15 Դ |
| միջազգային SMS | 20 Դ |

Բացասական հաշվեկշիռ

Բացասական հաշվեկշռի միջոցով Դուք կարող եք ակտիվացնել վճարովի ծառայություններ և ուղարկել կարճ հաղորդագրություններ: Բացասական հաշվեկշռից կարող եք օգտվել Ձեր բաժանորդագրությունից 15 օր հետո: U!Go 12500-ի համարբացասական հաշվեկշիռը 10000 դրամ:
Անհրաժեշտության դեպքում կարող եք նվազեցնել Ձեր սակագնային պլանով սահմանված բացասական հաշվեկշիռը մինչև 500 դրամ՝ զանգահարելով 444 կամ այցելելով Ucom-ի ցանկացած սպասարկման կենտրոն:

- Բաժանորդային պայմանագիրը կնքվում է անժամկետ՝ U!Go-ին 12 կամ 24 ամսով բաժանորդագրվելու պարտավորությամբ: Այդ պարտավորությունը համարվում է կատարված, եթե բաժանորդը վճարել է 12 կամ 24 ամիսների ամսավճարները (այդ թվում վճարումները սահմանված ժամկետում չկատարելու համար տուգանքը, եթե առկա է):
- 12 կամ 24 ամսով բաժանորդագրվելու պարտավորությունն ավարտվում է 12-րդ կամ 24-րդ ամսավճարը վճարելու օրը: Օրինակ, եթե բաժանորդագրվել եք 2016թ. հոկտեմբերի 5-ին և ամեն ամիս պարտաճանաչ վճարել եք ինչպես Ձեր ամսավճարը, այնպես էլ բացասական հաշվեկշռից օգտագործված ծառայությունների համար, ապա 24 ամսով բաժանորդագրվելու պարտավորությունն ավարտվում է 2018թ. հոկտեմբեր ամսում կատրված վճարումով:
- Պարտավորության ժամկետի հաշվարկի մեջ ներառվում են տվյալ պարտավորության համաձայնագրի կնքման առաջին ամիսն ամբողջությամբ և հաջորդող ամիսները, որոնց ընթացքում Ձեր սակագնային պլանին համապատասխանող բոլոր ծառայությունների դիմաց գանձվել է Ձեր ընթացիկ սակագնային պլանի ամսավճարի կեսից ավել գումար
- 12 կամ 24-ամսյա ժամկետը լրանալուց հետո, բաժանորդագրությունը շարունակվում է, եթե բաժանորդն այն չի դադարեցնում՝ այցելելով Ucom-ի սպասարկման կենտրոն: Մարտի 11-ից շարժական ինտերնետի համարից դեպի արտերկիր SMS ուղարկելու հնարավորությունը կարգելափակվի: Շարունակեք ուղարկել SMS դեպի տեղական ցանցեր: